Doi: 10.56737/2953-7843-2025.01-77

ՍՈՒՍԱՆՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Բանասիրական գիտ. դոկտոր, ՀՀ ԳԱԱ ԳԻ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՌՉԱԿՄԱՆ ՕՐԵՐԻՆ[1]

Հովհաննես Թումանյանի հայրենասիրությունը թե՛ արվեստում, թե՛ կյանքում ակնառու էր, անմիջական գործ՝ զուրկ վերացականությունից ու վերամբարձությունից, ողբից ու կոծերից, բարձր՝ վրեժից ու անեծքից: Բանաստեղծի հայրենասիրությունը ներառում է իր մեջ ազատասիրություն, անձնազոհություն, հերոսականություն եւ աներկյուղ հայացք ամեն ինչի նկատմամբ: Բանաստեղծի հայրենասիրությունը դրսեւորվեց նաեւ 1918 թ. գարնանը, երբ նա գլխավորեց զենքի ու զորքի տեղափոխումը Ղարաքիլիսա եւ Հայաստանի Հանրապետության հռչակման օրերին անվերջ զբաղված էր Լոռու ինքնապաշտպանությունը կազմակերպելու խնդիրներով: Այդ օրերին նա պատերազմական դեպքերի հորձանուտում էր, հայոց գոյամարտի կիզակետում, մեր պատմության հերթական Ավարայրի՝ Ղարաքիլիսայի ճակատամարտին նախորդող օրերի ու ամիսների թոհուբոհում:

1918 թ. փետրվարի 10-ին թուրքերն անցան հարձակման եւ գարնանը գրավեցին Երզնկան, Կարինը, Սարիղամիշը, Կարսը, Վանը: Դարձյալ օրհաս էր: Նույն օրն սկսեց գործել նոր իշխանություն՝ Անդրկովկասի սեյմը (խորհրդարան): Ապրիլի 9-ին Թուրքիայի պահանջով Անդրկովկասի սեյմը հռչակեց Ռուսաստանից անկախ Անդրկովկասի դաշնային դեմոկրատական հանրապետություն (ԱԴԴՀ): Ազգային պետականության բացակայության պայմաններում արտաքին թշնամուն դիմագրավելու համար պայքարը կազմակերպվում էր արդեն գոյություն ունեցող Հայրենակցական միությունների միջոցով: 1918 թ. հենց փետրվարին Հայոց ազգային խորհրդի (ՀԱԽ) հանձնարարությամբ Թումանյանն ստանձնում է Լոռու, Փամբակի, Ղազախ-Շամշադինի եւ Բորչալուի ընդհանուր լիազո-

---

[1]* *Ստացվել է՝ 19.03.2025, գրախոսվել է՝ 20.03.2025: էլ. հասցե՝* sushovh@mail.ru:

րի պարտականությունները։ Եթե հաշվի առնենք նույն օրերին թուրքերի լայնածավալ հարձակումը Հայաստանի վրա, ապա այդ պաշտոնը պատասխանատվության վիթխարի բեռ էր դնում բանաստեղծի ուսերին։ Արտաքին հարձակումն ստիպեց բանաստեղծին միջոցներ ձեռք առնել հայության ուժերը առավելագույնս կենտրոնացնելու եւ համախմբված ու միասնական պայքար սկսելու։ Այս համապատկերում պետք է դիտել այդ զարհուրելի եւ մղձավանջային օրերին՝ 1918 թ. մարտի 1-ին, Թումանյանի նախաձեռնությամբ բոլոր Հայրենակցական միությունների միացումով Հայոց Հայրենակցական միությունների միության (ՀՀՄՄ) ստեղծումը։ Միության նպատակն էր ինքնապաշտպանության կազմակերպումը, ազգերի միջեւ խաղաղություն հաստատումը։ Մինչ այդ բանաստեղծը միայն լոռեցիների Հայրենակցական միության նախագահն էր[2]։ 1918 թ. մարտի 1-ից նա շուրջ 20 Հայրենակցական միությունների նախագահն էր (դրանցից կարեւորներին կանդրադառնանք ստորեւ)։

ՀՀ ստեղծման եւ գոյապայքարի ողջ ընթացքում Թումանյանը ղեկավարում էր ՀՀՄՄ-ն, որն իր եռանդուն գործունեությունը ծավալեց 1918–1919 թթ.։ Մշտապես բանաստեղծի նախագահությամբ իր բնակարանում տեղի ունեցող ՀՀՄՄ կենտրոնական խորհրդի նիստերում հանգամանորեն քննարկվում էին զենքը գավառներ տեղափոխելու արգելքների վերացման, ինքնապաշտպանության գործը կազմակերպելու համար մտավորականներին գավառներ գործուղելու եւ այլ հարցեր[3]։ Թումանյանը բանակցում էր թե՛ Կովկասի թաթարների, թե՛ Թիֆլիսում ներկա արտասահմանյան հյուպատոսների հետ։ 1918 թ. մարտ-ապրիլին նա զինված խմբով (50 զինվոր) մեկնում է հայրենիք՝ իր հետ տանելով նաեւ ընտանիքի անդամներին, դուստրերին, որդիներից միայն կրտսերին՝ Արեգին։ Այս զինված «կես հարյուրյակը» եւ մի սպա՝ բանաստեղծի տրամադրության տակ էր դրվել 1918 թ. մարտի 20-ին՝ Անդրկովկասի կառավարության նախագահ եւ ռազմական մինիստր (մեկ-երկու ամիս անց Վրաստանի մենշեւիկյան կառավարության ներքին գործերի նախարար) Նոյ Ռամիշվիլիու հրամանով։ Թումանյանին է հանձնարարվում նաեւ Ղազախ-Բորչալուի ժողովրդի ինքնապաշտպանության ղեկավա-

---

[2] *«Մշակ» օրաթերթ, Թիֆլիս, փետրվարի 4, թիվ 26, էջ 1, տե՛ս նաեւ «Հորիզոն» օրաթերթ, Թիֆլիս, փետրվարի 4, թիվ 26, էջ 4։*

[3] *ՀՀՄՄ արխիվ, 1918 թ. մարտի 13ի արձանագրություն, ԹԹ, ՓԲ թիվ 386։ ՀԱԱ, թիվ 4033, ց. 2, գ. 908, թ. 2, «Գրական թերթ» եր., 1969, թիվ 36։*

րությունը[4]։ Ազգային խորհուրդը Թումանյանին հանձնել էր 50 000 ռուբլի գումարի անդորրագիր[5]։ Նույն շրջանում՝ 1918 թ. մարտի 17-ին, ՀԱԽը պաշտոնական նամակով դիմում է բանաստեղծին եւ խնդրում զբաղվել հայվրացական հարաբերությունների կարգավորման գործով[6]։ 1918 թ. մարտի 22-ին ՀՀՄՄ ժողովում Թումանյանն ընտրվում է հայ-թուրքական նոր ստեղծվող բլոկի ներկայացուցիչ։ Մարտի 23-ին Թիֆլիսի նախկին նախարարական պալատի սպիտակ դահլիճում տեղի է ունենում ջարդերի դադարեցման եւ խաղաղության ու հաշտեցման նպատակով Հայ-թուրքական սոցիալիստական բլոկի՝ հայմուսուլմանական հատուկ բյուրոյի հիմնադիր ժողով, որտեղ բանաստեղծն ընտրվում է 10 անձից բաղկացած վարչության անդամ եւ նախագահ Գ. Ղարաջյանի (Արկոմեդ) տեղակալ։ Եւս մի բյուրո, հասարակական ընկերություն, որի կենտրոնական դեմքերից է դառնում բանաստեղծը։

1918 թ. մարտից–մայիս ժամանակահատվածում բանաստեղծը լռում էր՝ հայրենակիցներին պատուհասած նոր աղետին դիմագրավելու, գաղթականության գործերով զբաղվելու եւ դարավոր թշնամու դեմ ինքնապաշտպանությունը կազմակերպելու, հայթուրքական ընդհարումները կանխելու նպատակով։ Նա հաստատվում է հիմնականում Ղարաքիլիսայում։ Ինչպես վկայում են ժամանակակիցները. «Թումանյանն անդադար բանակցությունների մեջ էր հայ եւ այլազգի գործիչների հետ. մեկ Դսեղում էր, մեկ՝ Ղարաքիլիսայում, մեկ շտապ մեկնում էր Թիֆլիս, ապա վերադառնում կռիվների վայրերը»[7]։ Ղարաքիլիսայից ղեկավարում էր Լոռու-Փամբակի ինքնապաշտպանության գործը։ Դուստրը՝ Նվարդը վկայում է. «Ամեն ինչ խառնվել էր իրար. տեղացի ու եկվոր, լքված զինվոր ու նոր կամավոր, զինվորականներ ու գյուղացիներ։ Լիազորներն իրենց

---

[4] *«Հորիզոն», փետրվարի 15, թիվ 55, էջ 1։ Տես նաեւ Հովհ. Թումանյան, Երկերի լիակատար ժողովածու 10 հատորով, հտ. 10, Երեւան,1999, էջ 640–641 Այսուհետեւ նույն աղբյուրը կհղվի՝ Թումանյան, ԵԼԺ, հատորն ու էջը։*

[5] *Լոռու, Փամբակի, Ղազախի, Շամշադինի եւ Բորչալուի շրջաններն ըստ զինվորական իշխանության խորհրդի որոշման բաժանված էին 11, այնուհետեւ 13 ենթաշրջանների՝ Բորչալու, Շնող, Ուզունլար, Դսեղ, Ջալալօղլի, Փամբակ, Դիլիջան, Կողբ, Բարանա, Քարվանսարա, Շամշադին, Բաշքյանդ։ Տես Լ. Կարապետյան, Թումանյանը եւ Հայոց հայրենակցական միությունների միությունը, «Պատմաբանասիրական հանդես», 2002, թիվ 2, (160), էջ 35։ Տես նաեւ Թումայան, ԵԼԺ 10, էջ 291։*

[6] *ԹԹ,ՆՆ թղթ. թիվ 45։*

[7] «Кавказское слово», *թիվ 67, 130, մարտի 24,25, «Հորիզոն», 1918, թիվ 63։ Տես նաեւ Թումանյանը ժամանակակիցների հուշերում (այսուհետ՝ ԹԺՀ), Երեւան, 1969, էջ 745։*

իրավունքներով... հաճախ իրար էին բախվում, վիճում, կռվում: Սրանց վարքագիծը հայրիկին վրդովմունք էր պատճառում: Նա հանգիստ չուներ, հուզված էր, գունատ, անքուն»[8]:

Երբեմն Թումանյանին մեղադրում էին, թե նա այնքան միամիտ էր, որ աշխարհի գերտերություններին կոչեր էր ուղղում եւ օգնություն աղաղակում: Կարծում ենք օրինակ՝ Լեոյի եւ այլոց նման դիտարկումները հիմնավոր չեն, քանի որ Թումանյանը մի կողմից կոչեր էր գրում եւ աջակցություն հայցում, մյուս կողմից զենք ու զինամթերք էր բաժանում եւ ինքնապաշտպանություն կազմակերպում: Թումանյանը գրչի մարդ էր, կարեւորում էր մշակույթի ու նրա գործիչների դերը եւ դիմում էր ոչ միայն տարբեր երկրների իշխանություններին, այլեւ հասարակական կազմակերպություններին, թերթերի խմբագրություններին, գրականության ու արվեստի աշխարհի մարդկանց, ձգտում էր հնչեցնել նրանց ձայնը:

Մայիսի 26–28-ից մինչեւ հունիսի 22-ը կամ 23-ը Թումանյանը Լոռիում էր, որտեղ ծավալվում էին պատերազմական գործողություններ: Մայիսի 15-ին թուրքական բանակը գրավում է Ալեքսանդրապոլը: Նույն օրը Թումանյանը Ղարաքիլիսայից հեռագիրնամակ է ուղարկում Թիֆլիս՝ Անդրկովկասի Ներքին գործերի մինիստր Ակակի Չխենկելիին[9]: Բանաստեղծը ներկայացնում է քաղաքական իրավիճակը, նոր արյունալի աղետների հնարավորությունը եւ օգնություն խնդրում: Այդ պահին նա չէր կարող ենթադրել, որ Անդրկովկասի սեյմի եւ դրա ղեկավարների իշխանությանը մնացել էր 10–11 օրվա «կյանք»: Բացի այդ, որքան էլ անհավանական էր կարծում, այնուամենայնիվ, փորձում էր օգնություն ստանալ: Թումանյանի հույսը զինված պայքարն էր: Եւ նա ակնկալում էր զենքի ու զինամթերքի, նաեւ՝ զինված ուժերի օգնություն: Իր տրամադրության տակ ունենալով զենքի երկու պահեստ՝ բանաստեղծն անձամբ էր տնօրինում զենքերի բաշխումը նաեւ խաղաղ բնակչությանը՝ ինքնապաշտպանության նպատակով[10]: Ա. Չխենկելիին դիմելու հաջորդ օրը՝ մայիսի 16-ին, բանաստեղծը զինված պայքարի կոչով դիմում է լոռեցիներին.

---

[8] Ն. Թումանյան. «Հուշեր եւ Զրույցներ» (Այսուհետ՝ ՀԶ), Երեւան, 1987, էջ 164: Տես նաեւ Թումանյան, ԵԼԺ, հտ. 7, էջ 648:

[9] Տես Թումանյան, ԵԼԺ 10, էջ 286:

[10] Պահպանվել է Ղազախ-Շամշադինի լիազոր Միքայել Աստվածատրյանի՝ զենքեր ստանալու մասին ստացականը: ԳԱԹ, ԿՀ ֆ. (Հայ գրողների կովկասյան ընկերության ֆոնդ), թիվ 231:

«Փոքրաթիվ թշնամին մեր սարերին է հասել։ Նա համարձակվում է մտնել Փամբակի ձորը. Մայմեխի ու Դվալի արանքը եւ գուցե մտածում է անցնել Գյուլլադագանա կիրճից ներս դեպի Լոռու սրբազան ձորերը։

Լոռեցիներ, այժմ ձեզ է ապավինել հայ փախստական ժողովուրդը եւ ամեն տեղից ձեզ է նայում հայ ազգի աչքը։ Հասել է էն օրը, երբ պետք է ցույց տանք, որ զուր չի Լոռու անունը Դաղստան հասել եւ ամեն մինդ անուն պիտի թողնեք աշխարհում։

Հավաքվեցե՛ք մեր մութ անտառների նման, կանգնեցե՛ք անսասան մեր սարերի նման, կրա՛կ թափեցեք եւ զարկեցե՛ք մեր սարերեի կայծակների նման, Թող թշնամին էլ տեսնի, աշխարհքն էլ, որ կարելի է Էրզրումի վրից էլ անցնել, Ղարսի վրից էլ, բայց Լոռու սարերից անցնել չի կարելի։ Սպասում եմ ձեզ»[11]*։ Թումանյանի այս կոչը հիշեցնում էր նրա խոսքից մի քանի օր հետո՝ Սարդարապատի հերոսամարտի նախաշեմին օր ու գիշեր հնչող զանգերին եւ բանաստեղծի մտերիմ բարեկամներից Գարեգին եպիսկոպոս Հովսեփյանցի (հետագայում՝ Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս) ոգեշունչ ճառը, որը զգուշացնում էր՝ ո՛չ օգնական ուժի ակնկալիք կա, ո՛չ էլ նահանջի ուղի, եւ միակ ելքը կա՛մ հաղթելն է, կա՛մ հայրենի սրբազան հողի վրա պատվով մեռնելը*[12]*։ Ազգային օրհասի պահերին զինված պայքարի բոլոր կոչերը, որ հնչեցրել է բանաստեղծը, անշուշտ, թեկուզ կարճատեւ, բայց խանդավառող եւ հայրենասիրական ոգին բարձրացնող նշանակություն են ունեցել։ Բացառություն չէր նաեւ լոռեցիներին ուղղվածը։ Նվարդը վկայում է. «Կոչին բոլոր գավառներից արձագանքեցին. Լոռու, Փամբակի, Ղազախի գյուղացիները զինված եկել էին Ղարաքիլիսա»*[13]*։*

Բանաստեղծը մի կողմից պայքարում էր արտաքին թշնամու դեմ, մյուս կողմից՝ գաղթականության հոգսերը թեթեւացնելու համար։ Ղա-

---

[11] ԹՈՒՄԱՆՅԱՆ, *ԵԼԺ հտ. 7, էջ 354, 648։*

[12] *Գարեգին Հովսեփյանն ասում էր. «Հայ ժողովուրդն օրհասական կռիւներ շատ է ունեցել եւ միշտ ելք է գտել ու փրկել իրեն։ Ելքը եղել է անձնազոհ հերոսութիւնը... Յե՛տ նայեցէք, մեզ մնացել են Երեւանն ու Էջմիածինը... Եթէ հերոսութեան չդիմենք, ամեն ինչ կորչելու է իսպառ, այլեւս չի լինի ո՛չ հայ, ո՛չ հայի հայրենիք...Հայրենակիցնե՛ր, եղբայրնե՛ր եւ որդինե՛ր, հին դարերում, երբ հայոց զօրքը պատրաստւում էր թշնամու դէմ գնալու, նրա հրամանատարները գալիս էին Էջմիածին՝ կաթողիկոսի մօտ՝ նրա աջը համբուրելու եւ օրհնութիւնն առնելու։ Բայց այս անգամ վտանգն այնքան ահաւոր է ու մեծ, որ ահա ես եմ Սուրբ Էջմիածնից եկել ձեր բոլորի ձեռքը համբուրելու, որ փրկենք հայրենիքը, փրկենք ձեր պատիւը, հայի պատիւը...»* http://www.magaghat.am/archives/25508:

[13] *ՀՁ, էջ 164։*

բաքիլիսայում ձեւավորվում է «Գաղթականության խնամքով զբաղվող հանձնաժողով»՝ Թումանյանի ղեկավարությամբ եւ հսկողությամբ: Նա անձամբ էր զբաղվում գաղթականների համար կերակուր պատրաստրաստելու, նրանց գիշերելու տեղ հատկացնելու գործը կազմակերպելու, նրանց ապահով վայրեր տեղափոխելու խնդիրներով: Հայաստանի հռչակմանը նախորդող տասնօրյակում Թումանյանը Դսեղում էր: Մայիսի 18-ից 25-ը նրա տանն էր իջեւանել նաեւ Անդրանիկ զորավարը: Այդ օրերին ժամապահը գիշերվա ժամը 1ին բանաստեղծի տուն Անդրանիկի մոտ է բերում գեներալ-լեյտենանտ, Մայիսյան հերոսամարտերի ընդհանուր հրամանատար Թ. Հ. Նազարբեկյանի զորքերի դեպի Թիֆլիս փախչող 39 սպա եւ մի քանի հարյուր զինվոր դասալիքներ: Թումանյանն այդ օրերին, զորավարի վկայությամբ, կերակրում էր մի քանի հարյուր մարդու[14]:

1918 թ. մայիսի 26-ին Վրաստանը հռչակեց իր անկախությունը, հաջորդ օրը՝ Ադրբեջանը, իսկ մայիսի 28-ին Թիֆլիսում գործող ՀԱԽ-ը մեծահարուստ նավթարդյունաբերող Միքայել Արամյանցի տանը հռչակեց Հայաստանի անկախությունը: Նույն օրը՝ մայիսի 28-ին, Ղարաքիլիսայի գաղթականությունը լցվել էր Շահալի, Դսեղ, Քոլագերան եւ Սանահին գյուղերը: Թուրքերը կանգ են առնում Ծաթերի եւ Դսեղի սահմանում: Դերենիկ Դեմիրճյանը վկայում է. «Տաճիկ հրամանատարը շատ հնարներ մտածեց իր մոտ կանչելով՝ որսալ Թումանյանին՝ կարծելով, թէ նա Դսեղի շրջանում խմբեր ունի կազմած եւ կարող է գլխացաւանք պատճառել տաճիկ զօրամասերին: Թումանեանը քիչ մնաց ընկներ ծուղակը»[15]:

Գաղթականներից ոմանք, այդ թվում Սիմոն Հախումյանի ընտանիքը գիշերում են Դսեղում՝ Թումանյանի հայրական տանը[16]: Նույն օրը Թիֆլիսում լուրեր են տարածվում, թե բանաստեղծը դուստրերի հետ գերի է ընկել[17]: Մայիսի 29-ի առավոտյան Դսեղից ընտանիքի անդամների հետ բանաստեղծն ուղեւորվում է Ջաղի ձոր, ուր ապրում են «Մելքոնանց դափում»[18]: Մայիսի 30-ին թուրքերը ներխուժեցին Ղարաքիլիսա: Հայկական

---

[14] *Տե՛ս* А. Озанян, Документы и Материалы, Вестник архивов Армении 1 (89) – 2 (90), Составители Арутюнян А. О., Арутюнян Г. Г., Эвоян В. С., Миэзоян С. С., Сафян П. Г., Шатирян Г. М., Ереван, 1991, *էջ 445:*

[15] *ԹԺՀ, էջ 46:*

[16] *ԹԺՀ, էջ 758:*

[17] *«Հորիզոն», 1918, թիւ 124, յունիսի 26:*

[18] *ՀՋ, էջ165:*

ուժերը հարկադրված նահանջում են Դիլիջան։ Մեկ երկու օր անց՝ հունիսի 1–2-ին, ընտանիքն ինչպես եւ 20 հոգուց կազմված խումբը բանաստեղծը ոտքով առաջնորդում է դեպի Թիֆլիս։ Բացի Աշխենից ու չորս որդիներից Թումանյանի հետ էին կինը՝ Օլգան, հինգ դուստրերը, անչափահաս որդին՝ Արեգը, Մուշեղի կինը՝ Մարիա Արխիլեւնան։ Իրերը բարձում են մի իշուկի վրա եւ ճանապարհ ընկնում։ Նրանց են միանում մեկ տասնյակից ավելի անձինք, այդ թվում՝ Հայկական հրաձգային դիվիզիայի շարքային զինվոր, նկարիչ Գ. Բաշինջաղյանի որդին՝ Զաքար Բաշինջաղյանը, քայքայվող եւ ցրված զորամասերի զինվորներ Նիկիտա Ջաղեթյանը, Լեւոն Բեկզադյանը եւ այլք[19]։ Հունիսի 2ից մինչեւ 14–15-ը, հաղթահարելով լեռները, խումբը կանգ է առնում Կոնձաձորում՝ բանաստեղծի քրոջ՝ Իսկուհի Շահվերդյանի տանը։ Թումանյանին ապավինած փախստականների խումբն օրեցօր համալրվում է նոր գաղթականներով՝ 20-ից հասնելով 100ի[20]։ Հունիսի 16-ին արդեն 100 հոգիանոց խմբին անձրեւի տակ բանաստեղծն ուղեկցում է Սանահին կայարանում գտնվող էրեկլոյի այգին։ Ճանապարհին տարբեր կողմերից գաղթած նորանոր խմբեր են ավելանում. «Իմանալով, որ Թումանյանը մեզ հետ է, իրենց կյանքն ապահով էին համարում,– հիշում է դուստրը։– Ճանապարհին հայրիկը խոսում էր հայ ժողովրդի կյանքից ու բախտից, նրա պատմությունից։ «–Հայ ժողովուրդը նորից թափառական դարձավ...», ասում էր հառաչելով»[21]։ Մտնում են Շահալիի ձոր եւ գիշերում այնտեղ։ Անձրեւը դադարում է։ Իջեւանում են Սանահինում՝ Թումանյանի վաղեմի ընկերներից մեկի՝ Մովսես Դիմաքսյանի՝ գրեթե կայարանում գտնվող տանը։ Հունիսի 20–22-ին Քոբերում բանաստեղծը հանդիպում է Կովկասում Գերմանիայի ներկայացուցչին. «Ես էս րոպեիս գերմանացիների մեծի մոտ էի»[22]։ Սիրալիր ընդունելություն է գտնում եւ լսում է իր հարցերի հուսադրող պատասխաններ. «Շատ սիրով վերաբերվեց, մանավանդ, երբ իմացավ, բանաստեղծ եմ։ Ասում է՝ էս երկու օրը ամեն բան կվերջանա»[23]։ Քոբերից, առավոտյան ժ. 6.ին գնում է Սանահին, որ 7ին մեկնի Թիֆլիս ու նորից վերադառնա[24]։ Հուլիսի 2-ին

---

[19] *ԹԺՀ, էջ 758–759։*

[20] *ՀՋ, էջ 166։*

[21] *Նույն տեղում։*

[22] ԹՈՒՄԱՆՅԱՆ, *ԵԼԺ 10, էջ 287։*

[23] *Նույն տեղում։*

[24] *Նույն տեղում, էջ 287, 643։*

թերթերն արդեն տեղեկացնում էին, որ «Լոռուայ շրջանից Թիֆլիս վերադարձաւ Յովհ. Թումանեանը»[25]: Սակայն բանաստեղծը Թիֆլիս հասել էր շատ ավելի վաղ: Հունիսի 28-ի թվագրությամբ պահպանվել է Թումանյանի նամակը՝ ուղղված Ալ. Խատիսյանին[26]: Հուլիսի 27-ին, բանաստեղծը ՀԱԽ-ին հրաժարական է տվել Լոռու, Փամբակի, Ղազախ-Շամշադինի եւ Բորչալուի ընդհանուր լիազորի պաշտոնից: Այդ մասին նա հայտնում է արդեն Թիֆլիսում ՀԱԽ-ին ուղղված իր պաշտոնական հայտարարության մեջ (հուլիսի 28)[27]:

Ուշագրավ է, որ Թումանյանը՝ չնայած իր խաղաղասիրական առաքելությունը Լոռիում սկսել էր, երբ դեռ չէր ստեղծվել ՀՀ-ն (1918 թ. մարտ–հունիս), սակայն 1919 թ. ապրիլին հանգամանալից հաշվետվություն է ներկայացնում Վրաստանում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչին՝ Լեւոն Եւանգուլյանին: Բանաստեղծը զեկուցում է, որ իրեն հանձնարարվել էր կազմակերպել ազգային ինքնապաշտպանությունը, զենք ու ռազմամթերք բաժանել Լոռու, Ղազախի, Շամշադինի հայությանը՝ սկսելով «Լոռուց – քանի որ... նրա դիրքը շատ կարեւոր է»[28], միաժամանակ Թումանյանին էր վստահվել («անձամբ ինձ հավատալով») հսկողություն սահմանել ողջ շրջանում: Հայոց Ազգային խորհուրդը հրաժարվել էր այդ զենք ու զինամթերքի համար գումարներ տրամադրել: Թումանյանը 2000 ռ. ստացել էր միայն Անդրկովկասի իշխանություններից եւ Թիֆլիսում Ամերիկյան ներկայացուցչությունից: Նա Հայրենակցությունների միջոցով հանձնաժողովներ էր կազմել եւ սկսել զենք գնելու եւ տեղափոխելու գործը՝ խոստանալով յուրաքանչյուր ծախսված լումայի հաշվետվությունը ներկայացնել:

Զենք գնելու համար ստեղծվածհանձնաժողովներն իրենց գումարն սպառել, սակայն հաշվետու չէին եղել Թումանյանին, եւ բանաստեղծն էլ առաջարկված նոր գումարն այլեւս չի ընդունել՝ արդեն չվստահելով կազմված հանձնաժողովին: Սակայն Ամերիկյան ներկայացուցչությունը, շարունակելով վստահել միայն Թումանյանին, նրա՝ գումարից հրաժարվելու որոշումը չի ընդունել եւ բանաստեղծին համոզել է ընդունել զենքի համար առաջարկվող գումարը: Ամերիկացիները խոստանում են

[25] «Հորիզոն», 1918, յունիսի 26, թիւ 123, էջ 2:
[26] ԹՈՒՄԱՆՅԱՆ, Եւթ 10, էջ 287:
[27] Նույն տեղում:
[28] Նույն տեղում, էջ 312–316:

Թումանյանին, որ ավելի էժան զենք ու զինամթերք ձեռք բերելու եւ Լոռի հասցնելու գործը իրենք կկազմակերպեն կարճ միջոցում: Այնուամենայնիվ, բանաստեղծը տատանվում էր ընդունել այդ գումարը, քանի որ համոզված էր, որ Ղարաքիլիսայում (մեկնել է փետրվարին.– Ս. Հ.) այն ավելորդ է եւ այնտեղ «ձեռք բերելու ոչինչ չկար էն ժամանակ»[29]: Այնուհանդերձ բանաստեղծը, ինչպես պարզվում է նրա հետագա խոստովանությունից, ընդունել է այդ գումարը կամ նրանով ամերիկացիների գնած զենքն ու զինամթերքը եւ բաժանել է զանազան գյուղերի ինչպես եւ Ղարաքիլիսայում գտնվող ՝զորքին օգնության եկած ժողովրդին: Թումանյանը զենքը ձեռք էր բերել նաեւ անհատների նվիրատվությունների միջոցով: Նվիրատուներից մեկն, օրինակ, նվիրելով 60 000 փամփուշտներ, չէր կամեցել, որ իր անունը հրապարակվի: Ինչպես նշել ենք՝ բանաստեղծի հսկողության տակ եղել է զենքի երկու պահեստ, որոնք քաղաքի գրավումից հետո թշնամուն մնացին: Պահեստապետներից մեկը զոհվել էր, մյուսը՝ փախել (Շահալի եւ Խաղբփլու):

Թումանյանը մտահոգ էր ամերիկյան հյուպատոսությանը հաշվետվություն ներկայացնելու խնդրով, սակայն դրա անհրաժեշտությունը շուտով վերացավ: Պատճառն Ամերիկյան ներկայացուցչության խնդրանքն էր: Հյուպատոսարանը զենքի ու զինամթերքի համար գումար տրամադրելու, զենքով որեւէ կողմին օգնելու պաշտոնական իրավասություն չուներ, ուստի Թումանյանին խնդրել էր գաղտնի պահել հայկական կողմին զենքով օժանդակելու իրենց նախաձեռնությունը: Հետեւաբար հաշվետվության մասին խոսք լինել չէր կարող: Թումանյանը համաձայնել էր այդ «օրինախախտությանը» եւ ամերիկյան գումարով զենք էր ձեռք բերել: Բանաստեղծն արդարանում է՝ նշելով, որ նրան ստիպել էր այդպես վարվել «ընդհանուր գործի օգուտը էն տագնապալի օրերին»[30]: Այս ամենին քաջատեղյակ՝ 1918–1919 թթ. արտաքին գործերի, հանրային կրթության եւ արվեստի նախարար, խորհրդարանի անդամ եւ փոխնախագահ Սիրական Տիգրանյանն[31] առաջարկել էր հաշվետվություն տալ ՀՀ պաշտոնական մարմիններին: Թումանյանը, հարգելով նախարարի խոսքը, համաձայնել էր: Դժվար է ասել Հայաստանի իշխանությունների պահանջով է

---

[29] *Նույն տեղում:*

[30] *Նույն տեղում:*

[31] *Տե՛ս* https://www.ysu.am/museum/52811:

Ս. Տիգրանյանը Թումանյանին նման խորհուրդ տվել, թե իր անձնական նախաձեռնությամբ, այնուամենայնիվ, բանաստեղծը Ս. Տիգրանյանի առաջարկությամբ է հաշվետու եղել ՀՀ իշխանություններին՝ նոր գումար ստանալու ակնկալիքով։ Բանաստեղծի տնօրինությանը հանձնված գումարը չէր բավարարել բոլոր լիազորներին աշխատավարձ տալու եւ կարեւոր այլ նպատակների իրականացման համար։ Հաշվետվության մեջ բանաստեղծը գրում է. «Սակայն էն հաշիվները եւ ստորագրությունները, որոնցով բաժանել ենք ու ստորագրություն առել, բոլորն իմ ձեռագրերի ու իրերի հետ մնացին Դսեղ գյուղում– որովհետեւ, երբ ես գյուղից դուրս էի եկել– հենց նույն օրը շրջապատել էին ու մտել գյուղերը թուրքերը (առաջին օրն ինձ բռնեցին, հետս գյուղն եկան)»[32]։

Այսպես, Թումանյանը հաշվետվություն է տվել եւ ՀՀՄՄ կենտրոնական խորհրդին եւ Վրաստանի ազգային խորհրդի գործադիր մարմնին։ Միաժամանակ Թումանյանը խոստանում էր Հայաստանի կառավարությանը ներկայացնել եղած ռազմամթերքի եւ զենքերի ցուցակը։ Ինքնապաշտպանության գործը Թումանյանին հանձնարարել էին ՀՀՄՄ-ն, ՀԱԽ-ը, Անդրկովկասի իշխանությունը, օժանդակել էր Ամերիկյան ներկայացուցչությունը, սակայն բանաստեղծը հաշվետվություն ներկայացնում էր ՀՀ-ին։ Եղել են արդյոք Թումանյանի գերծունեության վերաբերյալ անվստահություն հայտնող պաշտոնյաներ, թե ոչ, կամ հնչել են նրա հասցեին Անդրանիկին ու նրա խմբին իր տանը հյուրընկալելու եւ զորավարի՝ Ղարաքիլիսա չշտապելու մեղադրանքներ, չենք կարող ասել, սակայն ինչ-որ դժգոհություն այդ օրերի նրա գործունեությունից հնչել է, հակառակ դեպքում նա 1918 թ. հունիսի 27-ին հրաժարական չէր տա Լոռու, Փամբակի, Ղազախ-Շամշադինի, Բորչալուի ընդհանուր լիազորի պաշտոնից։ Այդ է վկայում հունիսի 28-ի Գիգային (Գեւորգ Խատիսյան) արված նրա խոստովանությունը. «Էլ չեմ ուզում գրել շատ ու շատ մութ եւ գարշելի բաների մասին, որոնց հետեւանքով ես երեկ հրաժարական տվի» *(10, 288)։ Հրաժարականից հետո՝ հուլիսի 14-ին, Թումանյանը ՀԱԽ-ին ներկայացնում է հայտարարություն՝ հանգամանալից հաշվետվությամբ։ Խնդրում է իրեն տալ հինգ շրջանները կառավարելու համար հասանելիք այն գումարը, որն ինքն ստիպված է եղել ծախսել կողմնակի միջոցներից, պարտք անելով այլ ընկերություններից։ Մեկ առ մեկ*

---

[32] *Տե՛ս «Հորիզոն», անդ։*

ներկայացնում է ՀԱԽ-ի հանձնած 50 000 ռ. ծախսերի հաշվետվությունը: Այդ գումարից ամսական աշխատավարձեր էին բաժանվել 13 շրջանների լիազորներին, նրանց օգնականներին, գանձապահին, 12 զինվորի, տրվել էր գրասենյակի վարձ զինվորների փոխադրության ճանապարհածախս: Ղարաքիլիսայում ապրուստի համար գումար էր տրամադրել նաեւ Ղազախի շրջանի զինվորներին եւ գաղթականներին: Թումանյանը ցուցաբերել էր աջակցություն եւ առաջին օգնություն նույնիսկ ՀԱԽ-ին ապավինած 600 թուրք կանանց ու երեխաների, 3000 թուրք գերիների: Փոխարինաբար գումարներ էր հատկացրել Ղարաքիլիսայի զինվորական կոմիսարին, Հայաստանի ապահովության խորհրդին, Ջալալօղլու ազգային խորհրդին: Բանաստեղծը միանձնյա չէր տնօրինել այդ գումարները, այլ զինվորական իշխանությունների հետ խորհրդակցելով: Թումանյանը խնդրում է կատարել դրամական հատկացումներ. «որ կարողանամ ետ տալ փոխ առած գումարները եւ վճարեմ անվճար մնացած ռոճիկները, այլեւ մի որոշ գումար յատկացնել լիկվիդացիայի համար... ռոճիկները պէտք է հաշվել մարտի 15-ից մինչեւ հունիսի 15-ը, այսինքն երեք ամիս: Ի դէպ եմ համարում վկայելու, որ մեր պաշտօնեաները ընդհանրապէս եղել են պարտաճանաչ ու նուիրուած, մեծ մասամբ բարձրագոյն կրթութեան տէր մարդիկ, ոմանք մեծապէս տուժել են խուճապների ժամանակ եւ գրեթէ ամենքն այժմ մնացել են բաց»[33]:

Երբեմն Թումայանին մեղադրում են, թե ինչու նա չգնաց Երեւան եւ չմասնակցեց պետական շինարարության գործին: Հարցի պատասխանը միանշանակ չէ: Սակայն նկատենք, որ հենց սկզբից բանաստեղծն աջակցում էր հեռվից, մասնակցում էր թե՛ խորհուրդներով ու դիտողություններով, քննադատությամբ, թե՛ անմիջական գործերով: Նա ակնկալում էր հանրապետության ղեկավարների առավել վճռական գործողություններ: Չէր հանդուրժում որեւէ դանդաղկոտություն սահմանների հռչակման հարցում: 1918 թ. հունիսի 28-ին Կոստանդնուպոլիս՝ Գեւորգ Խատիսյանին դժգոհում է Հայաստանի իշխանությունների անկարողությունից ու անվճռականությունից. «Մեր ազգային խորհրդի ու էսպէս ասած, կառավարութեան ապիկարութիւնը հասնում է ոճրագործութեան: Ոչ թէ իրենք իրենց ճանապարհը չբաց արին, այլ երբ գերմանացին ու վրացին էլ բաց արին, նոյնիսկ էն ժամանակ էլ մի չեկան ու տեղեկութիւն չտուին, թէ ինչ կայ, ինչ չկայ,

[33] *Նույն տեղում, էջ 288–291:*

որ մենք էլ մեր գիտեցածն անէինք ու որոշ սահմանում կանգնէինք, թէ էս էլ մերն է ու մեր իրաւունքն է: Այժմ էլ դեռ բան չեն անում: Նոյնիսկ կոմիսիան ուղարկել ուշացրել էին»[34]:

Թումանյանը՝ իբրեւ ՀՀՄՄ նախագահ, անում էր ամեն ինչ՝ թեթեւացնելու բազմահազար գաղթականության հոգսերը, դրանով օգտակար էր լինում ողջ հայությանը, Հայաստանի տարբեր գավառների բնակչությանը, հետեւաբար եւ Հայաստանի առաջին Հանրապետությանը: Թումանյանը հրապարակում էր տաբեր լեզուներով կոչեր՝ ուղղված աշխարհի բոլոր ժողովուրդներին եւ պետություններին՝ խնդրելով «Եղբայրական օգնութեան ձեռք մեկնել տառապեալ հայ ժողովրդին»: Բանաստեղծը ՀՀՄՄ աշխատակիցներին հորդորում էր հատկապես ուշադրության առնել եւ արձանագրել նաեւ լուսավոր երեւույթները միջազգային հարաբերությունների մեջ, վեր հանել նաեւ բարձր ու գեղեցիկ փաստերը եւ այդ նպատակով համագործակցել Կովկասյան լրագրողների ընկերության հետ[35]:

Թիֆլիս վերադառնալուց հետո գրեթե ամենօրյա նիստերին քննարկվում էին գաղթականներին վերաբերող բազմաթիվ խնդիրներ՝ կապված նրանց փոխադրման, տեղավորելու եւ այլ հարցերի հետ: 1918 թ. օգոստոսին ՀՀՄՄ կենտրոնական խորհրդի նիստերում մշտապես արծարծվում էր ահագնացող սովամահության ու համաճարակի դեմն առնելու միջոցներ ձեռնարկելու խնդիրը, դիմում էր բուլղարական ներկայացուցչությանը եւ բանավոր միջնորդություններով փորձում արագացնել փախստականների՝ հայրենիք վերադառնալու հարցի լուծումը: Երբ 1918 թ. հուլիսին Վիրահայ Հայոց ազգային խորհուրդը Թիֆլիսից Երեւան տեղափոխվեց, Թումանյանը որոշեց մնալ Թիֆլիսում: Նա բազում ուղղություններով էր սկսել ազգային գործունեություն ծավալել Թիֆլիսում, որտեղ դեռեւս գտնվում էին եւրոպական ներկայացուցչությունները: Եթե բանաստեղծը մեկներ Երեւան, այն մշակութային ու ազգային ընկերությունները, որոնք ինքը ղեկավարում էր այնտեղ, ինքնաբերաբար պետք է լուծարվեին: Այնուամենայնիվ, նա ըստ կարելվույն աջակցում էր ՀՀ իշխանություններին՝ գաղթականության եւ ազգային այլ խնդիրներ լուծելու հարցում[36]:

---

[34] *Նույն տեղում, էջ 287–288. 643:*
[35] *«Մշակ», 1918, յուլիսի 18, թիւ 139, էջ 3:*
[36] *Տե՛ս «Հորիզոն»,1918, սեպտեմբերի 5, թիւ 177, էջ 2:*

Հունիսի 30-ին տպագրվում է հաղորդում, որի համաձայն ՀԱԽ-ն մտադիր էր ուղարկել մի առանձին պատգամավորություն Բաթում՝ էսադ փաշայի մոտ բանակցելու փախստականների՝ Ալեքսանդրապոլ, Ախալքալաք եւ այլ շրջաններ վերադարձի մասին[37]։ Պատգամավորության կազմում էին գեներալ Ղորղանյանը, Ս. Հարությունյանը եւ Հովհ. Թումանյանը։ Այդ կազմով հայկական պատվիրակությունը Բաթում մեկնում է հուլիսին։ Գաղթականության՝ իրենց բնակության վայրերը վերադառնալու համար թույլտվությունը մերժվում է հետեւյալ պատճառաբանությամբ. «Դա առայժմ անկարելի է, որովհետեւ թուրքերի եւ հայերի սուր յարաբերութիւնները Թուրքիային անցած շրջաններում կարող են էքսցէսներ առաջ բերել»[38]։

Թումանյանը մասնակից էր Առաջին հանրապետության գործունեությանը, նրա խնդիրների լուծմանը, սակայն ոչ թե իբրեւ պաշտոնյա կամ իշխանության հրահանգները կատարող, այլ իր նախաձեռնությամբ։

Լինելով ՀՀՄՄ նախագահ նա մասնակցում էր Վիրահայ Ազգային խորհրդի եւ ՀՀ դիվանագիտական ներկայացուցչության համատեղ խորհրդակցություններին, որոնք 1918 թ. հոկտեմբերի 11-ին բնորոշում է «յոյժ կարեւոր եւ անհետաձգելի»[39]։

Երբ Վրաստանում Հայաստանի դեսպան Ա. Ջամալյանի իրավասությունները դադարեցվեցին եւ դիվանագիտական ներկայացուցչությունը փակվեց, Թումանյանը դարձավ «ՀՀ անպաշտօն» դեսպանը Վրաստանում։ 1918 թ. դեկտեմբերի 1920-ին նա Զուրաբովի հետ այցելում է Վրաստանի մենշեւիկյան կառավարության արտաքին գործերի նախարար Եւգենի Գեգեչկորուն եւ ներկայացնում հաշտության նախագիծ։ Բանաստեղծին հաջողվում էր վրաց գրողների ձայնը բարձրացնել հանուն խաղության։ Արձագանքները չեն ուշանում։ Թումանյանի «Ելքը» հոդվածի հրապարակումից[40] մի շաբաթ անց Տիցիան Տաբիձեն գրում է. «Ոչ ոք ավելի իրավունք չունի Հայաստանի ժողովրդի անունից խոսելու, ինչպես Դուք, եւ ոչ ոքի ձայնը չի լինի այնքան ճշմարիտ ու հասկանալի, որքան լուսավորյալ բանաստեղծինն ու հայրենասերինը։ Դուք, իբրեւ բանաստեղծ, այդ իրավունքն

---

[37] «Մշակ», 1918, յունիսի 30, թիւ 125, էջ 3։
[38] «Մշակ», 1918, թիւ 131։
[39] ԹԹ, ՓԲ, թիվ 478։
[40] Տե՛ս «Тифлисский листок», 1918, դեկտեմբերի 24, թիվ 277։

ստացել եք Ձեր ոգեշունչ բանաստեղծություններով, իսկ իբրեւ հայրենասեր՝ թուրքական ճակատ մեկնեցին Ձեր յոթ զավակները, որոնցից մեկի դին երկու շաբաթ առաջ բերեցին Թիֆլիս։ Մենք հավատում ենք, որ չի գտնվի մեկ այլ հայ, որն այնպես վշտանա այս պատերազմի համար, ինչպես Դուք... Ձեր մեջ խոսում է բանաստեղծի ազնվությունը... Ձեր ու Ձեզ նման պատվարժան հայերով լուսավորված ճանապարհը իր խաղաղ սահմաններում»[41]*։*

1919 թ. ապրիլի 30-ին Թումանյանը Անդրանիկի հետ հանդիպում է Վրաստանի մենշեւիկյան կառավարության արտաքին գործերի նախարար Եւգենի Գեգեչկորուն՝ հենց վերջինիս հրավերով։ Բանաստեղծը եւ զորավարը խորհուրդ են տալիս ձեռնպահ մնալ Հայաստանը շրջափակելու քայլերից։ Անդրանիկն ասում է, որ հայերն ու վրացիները իրենց մտածելակերպով, ավանդույթներով եւ աշխարհագրական դիրքով անբաժանելի են միմյանցից, իսկ եթե համատեղ ապրելու միջոց չգտնեն ռազմական եւ տնտեսական ոլորտներում, ապա հայերի դիակը կտանեն երեկոյան, իսկ վրացիներինը՝ առավոտյան. տարբերությունը կլինի մի գիշեր։ Այդ հանդիպման ժամանակ Թումանյանը կատարել է միաժամանակ թարգմանչի դեր[42]*։ Հաջորդ հանդիպումը՝ դարձյալ Ե. Գեգեչկորու հրավերով, տեղի է ունենում 1919 մայիսի 2–3-ը։ Զորավարի, Թումանյանի եւ Ե. Գեգեչկորու զրույցն ընթանում է հայ-վրացական ընդհարումների, երկու ժողովուրդների խաղաղ գոյակցության շուրջ։ Անդրանիկը խնդրում է թույլատրել Բաթումից եկող ալյուրը երկաթուղով Երեւան բերել։ Գեգեչկորին խոստանում է ընդառաջել։ Անդրանիկի եւ Թումանյանի միջնորդությունը դրական ազդեցություն ունեցավ Բաթում–Թիֆլիս–Երեւան երկաթուղին վերագործարկելու հարցում։*

Դիտելի է, որ յուրաքանչյուր նշանակալից իրադարձության պահին Թումանյանը ՀՀ եւ մեր պետականության կողքին էր։ Նա ՀՀ հետ համագործակցության էր ձգտում նաեւ «Քննիչ բյուրոյի» գործունեության շրջանակներում։ 1918 թ. դեկտեմբերի 17-ին Բանաստեղծի նախաձեռնությամբ ու գլխավորությամբ հիմնվում է «Համաշխարհային պատերազմից հայ ժողովրդի կրած վնասների քննիչ հանձնաժողով» (Քննիչ Բիւրо), *եւ բա-*

---

[41] *«Սաքարթվելո», Թիֆլիս, թիվ 1, հունվարի 2։ Հայերենը հրապարակել է Հրաչյա Բաբայանը Երեւանի համալսարան. Գիտահանրամատչելի հանդես»-ում, թիվ 2 (73) էջ 46–47։*

[42] *Տե՛ս* А. Озанян, Документы и Материалы, Ереван, 1991, *էջ 17, 448։*

նաստեղծն ստանձնում է նախագահի պաշտոնը[43]։ Այսպիսով Հայաստանի սահմաններից դուրս Թումանյանի ջանքերով դրվում է Հայ դատի եւ պահանջատիրության սկիզբը[44]։

Վրաց ոստիկանությունը 1919 թ. մայիսին խուզարկում է Բյուրոյի գրասենյակը եւ կալանք դնում։ 1918 թ. դեկտեմբերին Թումանյանի շնորհիվ փրկվում է Եւ. Դեգեչկորու կյանքը։ Ռումբը ձեռքին մահափորձի մասնակիցները հեռանում են՝ տեսնելով Թումանյանին նրա կողքին[45]։ Բանաստեղծը դարձել էր կապող օղակ ՀՀ եւ Թիֆլիսում հաստատված արտասահմանյան ներկայացուցչությունների միջեւ։ 1919 թ. Ապրիլի 20–22-ին նա հանդիպում է Ամերիկայի հյուպատոսին, իսկ 1919 թ. մայիսին, հյուպատոսը, մտադրվելով հանդիպել Հայաստանի իշխանություններին, խնդրում է բանաստեղծին ուղեկցել իրեն Երեւան[46]։

Դեռեւս 1918 թ. դեկտեմբերի 14-ին Թումանյանն իր տանն ընդունում է անգլիական հյուպատոսին, հաջորդ օրը՝ Ֆրանսիայի եւ Հունաստանի դեսպաններին եւ արտասահմանյան դիվանագիտական այլ ներկայացուցիչների. «Այժմ սպասում եմ հունական եւ ֆրանսիական դեսպաններին, գալու են մոտս, մի փոքրիկ շրջանի հետ մի զրույց անենք»[47]։ Դեկտեմբերյան նույն օրերին Թումանյանը հյուրընկալում է նաեւ Թիֆլիսում պաշտոնական այցով գտնվող Վլադիկավկազի հյուպատոս՝ ֆրանսիացի Դյուռուային, որ հայերին առատ խոստումներ է տվել[48]։

Այսպես. Թումանյանն անում էր հնարավորն ու անհնարինը՝ սատարելու մեր նորաստեղծ պետականությանը, աջակցում էր գրեթե կիսամերկ ու բոկոտն եւ թշնամու դեմ անհավասար մարտ մղող մեր զորքին, հազարավոր գաղթականներին ու որբերին, որոնցից շատ

---

[43] *Բյուրոյի մասին առավել հանգամանորեն տե՛ս* Ա. Զաքարյան, *Հովհաննես Թումանյանի ղեկավարած Քննիչ հանձնաժողովի գործունեության շուրջ, Թումանյան – 145. Միջբուհական գիտաժողով՝ նվիրված Հովհաննես Թումանյանի ծննդյան 145-ամյակին (6–7 մայիսի, 2014), Զեկուցումների ժողովածու, Երեւան, 2016, էջ 20–25։*

[44] *ՀՀ պատմության կենտրոնական արխիվ ՀԱԱ, ֆ. 221, ց. 1,գ. 143, թ. 29, տե՛ս նաեւ՝ Լեո, Հայաստանի ուղիների պաշտպանական միջոցների մասին. «Վավերագրեր* Ա. Ղազիյան, Ա. Քալանթարյան», *Երեւան, 1999, էջ 20։*

[45] *Տե՛ս «Թումանյանի զավակները. Աշխեն, Հուշեր եւ ընտանեկան պատմություններ», Եր., Մուղնի հրատ. 2011, էջ 122։*

[46] Թումանյան, *ԵԼԺ 10, էջ 317։*

[47] *Նույն տեղում, էջ 299։*

[48] *Բանաստեղծի սեղանատանը կազմակերպված ճաշկերույթին ներկա է եղել նաեւ Լեոն. ԹԺՀ, էջ 99։*

քշերն էին պատսպարված՝ մերկ, դողդոջ, կիսաքաղց թափառում էին փողոցներում։ Նա ամեն ինչ արեց դադարեցնելու հայ-վրացական պատերազմը եւ հրապարակայնորեն հանդես եկավ Հայաստանի սահմանների պաշտպանությամբ։ Թումանյանը հանդիպում էր օտարերկրյա դեսպաններին, կոչերով դիմում էր աշխարհի ժողովուրդներին, առաջադեմ ուժերին՝ ուշադրություն հրավիրելով Հայկական հարցի վրա եւ դնելով Հայ դատի առաջին հիմնաքարը։ Իր հավասարակշիռ մոտեցումներով փորձում էր կանխել գալիք աղետները, ամեն գնով հեռու պահել իշխանություններին անհեռատես քայլերից, ոչ մի գնով եւ ոչ մի նպատակի համար չվտանգել ժողովրդի գոյությունը. երեւույթ, որին կարոտ ենք այսօր։

ՀԻՄՆԱԲԱՌԵՐ

Թումանյան, դեսպան, որբեր, նորաստեղծ պետություն

РЕЗЮМЕ

Ованес Туманян, выдающийся армянский поэт, писатель и общественный деятель, проявил свою патриотическую позицию не только в художественном творчестве, но и в активной гражданской деятельности. Его патриотизм носил конкретный и целенаправленный характер, исключая элементы абстрактного пафоса, мстительности и созерцательности. Важной вехой его общественной деятельности стали события весны 1918 года, в период провозглашения Республики Армения, а также предшествующие этому месяцы.

С марта по май 1918 года Туманян находился в Лори, куда он прибыл 25 марта по поручению властей Закавказья, по приглашению местных жителей и по собственной инициативе. Основной целью его миссии было противодействие турецкому военному вторжению и организация обороны региона. В рамках этой деятельности он способствовал вооружению местного населения, привезя с собой боеприпасы, приобретенные при финансовой поддержке и содействии Американского консульства.

Туманян не ограничивался исключительно военной помощью. Он активно участвовал в межнациональном диалоге, занимая пост заместителя председа-

теля недавно созданного армяно-мусульманского бюро, целью которого было предотвращение межэтнических столкновений. Кроме того, он выступал в качестве председателя объединения двадцати земляческих союзов, что укрепляло его политическое влияние в регионе. В условиях нарастающей военной угрозы поэт также занимался вопросами турецких военнопленных и организовывал помощь десяткам тысяч армянских беженцев. В Караклисе им была создана и возглавлена специальная комиссия по организации гуманитарной помощи, что свидетельствует о его разносторонней социальной активности.

30 мая 1918 года турецкие войска вошли в Караклис. В этот критический момент Туманян предпринял попытки переговоров с представителями немецких властных структур, стремясь обеспечить безопасность отступающего гражданского населения.

В последующий период, во время кратковременного существования Первой Республики Армения, Туманян продолжал оказывать содействие государственному строительству. Он выступал в защиту территориальной целостности Армении, участвовал в процессе мирного урегулирования армяно-грузинского конфликта и обращался с публичными воззваниями к мировому сообществу, акцентируя внимание на Армянском вопросе. Эти инициативы заложили один из первых камней в фундамент формирования армянской национальной политической концепции, известной как Айдат.

Параллельно с этим он продолжал свою активную деятельность в сфере армянской литературы и культуры, занимая в ней ведущие позиции. Его деятельность в этот период демонстрирует синтез культурной, общественной и политической миссии, что делает его одной из ключевых фигур в истории Армении начала XX века.

SUMMARY

Hovhannes Tumanyan, a prominent Armenian poet, writer, and public figure, demonstrated his patriotic stance not only through his literary works but also through his active civic engagement. His patriotism was characterized by a concrete and pragmatic approach, devoid of abstract idealism, vengefulness, or excessive rhetoric. A significant phase of his public activity was marked by the events of the spring of 1918, particularly during the proclamation of the Republic of Armenia and the preceding months.

From March to May 1918, Tumanyan was in Lori, where he had arrived on March 25 upon the instruction of the Transcaucasian government, at the invitation of the local population, and on his own initiative. His primary objective was to counter the Turkish invasion and to organize the self-defense of the region. In this effort, he facilitated the transportation of arms and ammunition, which were acquired with the financial support and assistance of the American Consulate. Tumanyan's activities were not limited to military support. He played a key role in interethnic dialogue as the deputy chairman of the newly established Armenian-Muslim Bureau, which aimed to prevent intercommunal conflicts. Additionally, he served as the chairman of the association of twenty compatriotic unions, further solidifying his influence in the region.

Amidst the intensifying military threat, Tumanyan also addressed humanitarian concerns. He took part in organizing aid for Turkish prisoners of war and provided assistance to tens of thousands of Armenian refugees. In Karaklis, he established and led a special commission dedicated to the coordination of refugee relief efforts.

On May 30, 1918, Turkish forces entered Karaklis. At this critical juncture, Tumanyan engaged in negotiations with high-ranking German officials, seeking to ensure the safety of the retreating local population.

In the subsequent period, during the brief existence of the First Republic of Armenia, Tumanyan remained actively involved in the consolidation of the newly formed state. He defended the territorial integrity of Armenia, played a role in the cessation of Armenian-Georgian military clashes, and made appeals to the international community, addressing world governments and progressive forces to draw attention to the Armenian Question. Through these efforts, he contributed to laying the ideological foundations of what would later become known as the Armenian Cause (Hay Dat).

Simultaneously, Tumanyan continued to play a leading role in Armenian literary and cultural life, further demonstrating his ability to synthesize his cultural, civic, and political mission. His activities during this period underscore his significance as one of the key figures in early 20th-century Armenian history.